

*
 «Որ յիշատակարան քերէ կամ թուղթ կտրէ եւ կամ գիր գրէ լուսանցն, մասն զուղայի առցէ եւ զխաչահանանցն, զԿորխայ եւ զԹաղանայ եւ Ձկայէնի պատիժս կրէ» (Տիւրիկ, Աւետ. Գ. Ե. Սրուանձ., էջ 216):

*
 «Ով որ յիշատակարան կտրէ կամ քերէ կամ սրբէ, կտրի իւր յոյսն արքայութեան երկնից եւ սրբաջինջ լինի եւ ազինք նորա եւ ազգ» (Չմշկած. Աւետ. Գ. Ե. Սրուանձ. էջ 371):

*
 «Աղաչեմ որ լաւ խնամք տանիք, ի հրոյ եւ ի ջրոյ պահէք եւ ի ազէտ ընթերցողաց... Ով ոք որ իցէ նենդութեամբ պատճառանօք ինչ հանէ զսուրբ Աստուածաշունչս ի դրանէ Սր. Ած. — ածնին, ի յԱստուածաշունչ տառքս որչափ վատ եւ նզովք եւ անէծք կայ՝ ի վերայ նմին եղիցի. եւ որ... լաւ խնամք տանէ եւ գէջ տեղէ եւ ի հրոյ եւ ի ջրոյ պատրաստ պահէ, որչափ յԱստուածաշունչս շնորհք եւ օրհնութիւն եւ նախախնամութիւն ի վերայ նորին եղիցի. ամէն» (Արդնոյ Վանքի Ձեռ. Սըրուանձ. էջ 398):

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԸ ՍԻՐՈՂՆԵՐՈՒ ԲՆՈՐՈՇ ԻՆՔՆԱԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ

«Ի խնդրոյ պատուական եւ ճշնադէպ քահանայ Պօղոսի, վասնզի բազում փափաքանօք եւ ըղձեալ սրտիւ ետ զսա գծել եւ նկարազարդել ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց»:

*
 «Յիշեցէք ի տէր եւ յաղօթս վերջին կազմել ամօղ զԱւետիքն եւ զծնողսն եւ զՄուրատխան եւ զԾամ խաթունն եւ զորդէքն զՅակոբն, զՍարգիսն եւ զԱլթունն, որ կազմել ետուն ի թիւ ՌձԾԳ»:

ՎԱՆՔԸ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Հին ժամանակները, բացի այն որ օժտւած մարդիկ կամովին մտել են վանք «ի փառս Աստուծոյ» ծառայեցնելու իրենց տաղանքը, հասարակական-մտաւոր շարժման ղեկավար հոգեւորականութիւնը ինքն ալ աշ-

խատեր է, որ, բնատուր ձիրքով մարդիկ հըրաժարին աշխարհական կեանքէ եւ դան եղբայրանալ ի Քրիստոս միաբանածներու հետ:

Մեր երկրի մէջ, երբ այսօրուան պէս չկային ուսումնարանական հաստատութիւններ, վանքը՝ որպէս ուսումնարան գեղարուեստական պարասպմունքի՝ ինքնին գրաւեր է կոչումի տէր մարդիկը:

Իսկ երբ հաշուի առնենք այն պարագան ալ, որ վանքը ամբիշտ ապահովեր է ինքնընծաներու ապրուստը, շատ պարզ կը լինի որ՝ վանքը եղեր է միանգամայն յարմարագոյն վայրը բոլոր անոնց համար, որոնք իրենց մէջ զգացեր են անդիմադրելի մղումն դէպի գեղարուեստական պարասպմունքը:

Մեր գրչագիրները, որոնց ամենահինները մեզ չեն հասած դժբախտաբար՝ ամէնքն ալ մագաղաթի վրայ եղած գործերը՝ (եւ չեմ հաշուեր Ժ. Ե. դարէն ասդին թղթի վրայ եղածները) աշխատասիրուած են հայ վանքերու մէջ, գլխաւորաբար հոգեւորականի ձեռք կամ անոր ձեռքի տակ «հմտութիւն» ձեռք բերած «տեղեակ» մարդոց ձեռքը:

* * *

ՄԱԳԱՂԱԹԻ ՎՐԱՅ ՊԱՏԿԵՐԱՉԱՐԴՈՒԹԵԱՆ ՄՕԹԻՎԸ (MOTIF)

Մագաղաթի վրայ գրչագիրներու պատկերազարդութեան գլխաւոր motif-ը՝ երբ դիմանկարներ են՝ Քրիստոս, Ած. ածիւն, Հայր Աստուած, եւ աւետարանիչներ, առաջին հերթին:

Յետոյ Սուրբ Գրոց = (Աւտարանի եւ Աստուածաշունչի պատմութեան) էպիգրֆներ՝ «աւետումն», «ծնունդ», «մոգերու այց», «մանկանց կոտորած», «ի տանաբ ընծայումն», «մկրտութիւն», «Յիառու ալեկոծ ծովին կը հրամայէ հանդարտիլ», «այլակերպութիւն», «երուտաղէմ մուտքը», «ընթրիքը», «մատնութիւնը», «Գեթսեմանիի աղօթքը», «չարչարանքը», «խաչելութիւնը», «յարութիւնը», «համբարձում», «հոգեգալուստ» եւ այլն, բոլորն ալ յարակից դէպքերով:

Յաճախագէտ է Քրիստոսը որպէս Pantokrator (օրինաց տուող)՝ դահի վրայ՝ (այս մէկը շատ բնագանգական է): Ապա՝ «Ած. ածիւն, մայր